'ի մին բնակէին կրօնաւորք Հայոց, որպէս ստորագրէ զայն ականատես Եղիշէ վարդապետ կամ քահանայ 'ի Ճառն Պայծառակերպութեան։ Սոյն վանօրայք թէպէտ եւ կրեցին վիշտս և տառապանս ժամանակ առ ժամանակ յԱրաբացւոց, Թուրքաց և յայլոց, սակայն կացին մնացին մինչեւ 'ի ժամանակս աշխարհակալութեան Սալահատինի։ (1113)։

Բալտուին յետ մղելոյ զզէսպէս պատերազմունս, կանգնելոյ զյաղթանակս, եւ տիրելոյ քաղաքաց 'ի Պաղեստին եւ յայլ ուրեք, պատրաստեցաւ արշաւել 'ի սահմանս Եգիպտոսի։ որպէս յառաջ բերէ զայս պատմիչն Արաբացի, և կոչէ զնա Պէրոէվէլ։ հասեալ նորա 'ի քաղաքն Գազայ, առ զնա և աւերեաց զբազում տեղիս նորին, և հուր արկեալ այրեաց զմզկիթն այլազգեաց։ Եւ զկնի աւուրց ինչ՝ ել անտի 'ի ճանապարհ Խոթ՝ գնալ յԵգիպտոս։ չեւ եւս հասեալ յաւանն Արիշ, մեռաւ 'ի ճանապարհին եւ թաղեալ զմորոտիս նորին, ածին զդիակն յԵրուսաղէմ եւ թաղեցին 'ի տաճարին Ս. Յարութեան առաջի Գողգոթայի, առ գերեզմանաւ Կոնդուպրեայ և յաջորդեաց զաթոռ թագաւորութեան Բալտուին Բ. Տիւպուրկ, որ էր կոմս Եդեսիոյ, այր ագահ և ժլատ (*) (1118)։

Բալտուին Բ. բաց 'ի սահմանացն Երուսաղէմի, տիրեաց նաեւ Անտիոքայ, և քաղաքաց աշխարհին Կիլիկիոյ, զրկելով զիշխանաւորս Հայոց յարդար վաստակոց նոցին, թերեւս փոխանակ երախտեաց և բարեաց նոցին հատուցին Լատինք զայսոսիկ չարիս, թէպէտ և Լեւոն Ա. իշխանն Հայոց տոկոսեաւք հատոյց զչարիսն 'ի գլուխս նոցա և տարածեաց զզէնս իւր մինչեւ 'ի սահմանս Եգիպտոսի։

Իսկ 'ի պատերազմին՝ որ 'ի կողմանս Սամուսատայ գերի վարեցաւ հանդերձ քեռորդւովն իւրով 'ի Պալակ ամիրայէն Բերիոյ և Հանձթոյ, եւ եղաւ 'ի բանտի երկաթի կապանօք 'ի Խարբերդ, ուր բանտարկեալ էին յառաջագոյն կոմսն Եդեսիոյ Ճոսլին և Գալէրան (1123)։ Ճոս-

---

(*) Գերեզմանք երկուց թագաւորացս այսոցիկ նախ քան զերդեհ տաճարին՝ երեւէին արտաքոյ երկաքանչիւր տապանագրով իւրեանց, որպէս է տեսանել 'ի գիրս Ճանապարհորդացն Եւրոպացւոց։ Իսկ 'ի ժամանակս Նորոգութեան մուծին զնոսա Յոյնք 'ի Ներքս 'ի սենեակն, ուր է մնասուն Ադամայ և այժմ՝ չերեւին տեղիք նոցին։